ԲՐՅՈՒՍՈՎՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ – 2023

ԵՐԵՎԱՆ, 2023 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-14

ՀԱՐԳԵԼԻ՛ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը հրավիրում է Ձեզ՝ մասնակցելու «Բրյուսովյան ընթերցումներ – 2023» միջազգային հոբելյանական գիտաժողովին, որը նվիրված է Վալերի Յակովլևիչ Բրյուսովի ծննդյան 150-ամյակին:

Ռուս ականավոր բանաստեղծ, արձակագիր, գրականագետ, ռուսական սիմվոլիզմի գաղափարախոսական առաջնորդ և տեսաբան Վալերի Բրյուսովը հայ ժողովրդի նվիրյալ բարեկամն է: 1916 թվականին Վ. Բրյուսովի խմբագրությամբ լույս տեսած «Հայաստանի պոեզիա» ժողովածուն ռուս ընթերցողին է ներկայացրել հայ պոեզիայի լավագույն նմուշները հին ժամանակներից ի վեր: Վ. Բրյուսովին և իր գործընկերներին հաջողվել է իրականացնել հսկայական գործ՝ օտարալեզու ընթերցողին բացահայտելով Հայաստանի հարուստ պոեզիան, որը մինչ այդ նրանց համար, Վ. Բրյուսովի խոսքերով, «terra incognita» էր: Վ. Բրյուսովի գրչին են պատկանում «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը», ինչպես նաև Հայաստանին և հայ ժողովրդին նվիրված գեղեցիկ բանաստեղծությունները, հայկական պատմական արձակի ժողովածուի նախագիծը և այլն:

Համաժողովի կազմակերպիչներն են՝

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ա. Գորկու անվ. Համաշխարհային գրականության ինստիտուտ,

Վ. Դալի անվ. ռուս գրականության պատմության պետական թանգարան,

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,

Հայաստանի ազգային գրադարան:

Բանաստեղծի 150-ամյա հոբելյանը հնարավորություն է ընձեռում մոսկովյան և երևանյան հարթակներում հերթական անգամ միավորելու տարբեր երկրների բրյուսովագետներին: «Բրյուսովյան ընթերցումներ – 2023» միջազգային գիտաժողովն անցկացվելու է «Վ. Բրյուսովը և ռուսական մոդեռնիզմը համաշխարհային մշակույթի ֆոնին» միջազգային գիտական համաժողովի շրջանակներում:

Համաժողովը կանցկացվի 2023 թ. հոկտեմբերի 9-14-ը (2023 թ. հոկտեմբերի 9-10-ը՝ Մոսկվայում, 12-14-ը՝ Երևանում):

Երևանում գիտաժողովը կանցկացվի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի և Հայաստանի ազգային գրադարանի հարթակներում:

Գիտաժողովի ընթացքում քննարկման են ներկայացվելու հետևյալ հիմնահարցերը՝

- Վ. Բրյուսովը և նրա գրական շրջապատը,
- Վ. Բրյուսովի ստեղծագործությունները մշակույթների երկխոսության համատեքստում,
- Վ. Բրյուսովի՝ որպես Ռուսաստանի, Հայաստանի, եվրոպական և ազգային այլ մշակույթների միջև մեդիատորի ստեղծագործությունները,
- Վ. Բրյուսովի թարգմանչական գործունեությունը;
- «Հայաստանի պոեզիան» որպես ազգային գրականության ժողովածուի չափանիշ,
- Վ. Բրյուսովի ստեղծագործական ժառանգության ընկալումը տարբեր երկրների գրականություններում:

Քննարկմանը ներկայացված հիմնահարցերի շրջանակը կարող է ընդլայնվել:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են ռուսերեն, հայերեն, անգլերեն:

Միջոցառման ձևաչափը հիբրիդային է (առկա, Zoom):

Գիտաժողովի շրջանակներում Երևանում կիրականացվի մշակութային շրջայց՝ նվիրված Վ. Բրյուսովի ստեղծագործական ժառանգությանը ռուսական, ազգային և համաշխարհային մոդեռնիզմի համատեքստում:

«**Բրյուսովյան ընթերցումներ – 2023**» գիտաժողովի նյութերը կհրատարակվեն:

Երևանում անցկացվելիք գիտաժողովի **մասնակցության հայտերը** անհրաժեշտ է ուղարկել brusovcenter@gmail.com **էլեկտրոնային հասցեին մինչև 2023 թ.-ի հունիսի 15-ը:**

Զեկույցների թեզիսները (առավելագույնը 1 հազար նիշ բացատներով) անհրաժեշտ է ուղարկել bryusovforum2023@gmail.com **էլեկտրոնային հասցեին մինչև 2023 թ.-ի հունիսի 15-ը:**

Գիտաժողովին առնչվող հարցերով կարող եք դիմել Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի Բրյուսովյան գիտական կենտրոնին հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ brusovcenter@gmail.com:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ